ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, 0011, ք. Երևան, Ա. Արմենակյան 141, հեռ.՝ (+374 11) 518 700, էլ. փոստ՝ norq-marash@yerevan.am

Ÿ 32/197698-24 03 դեկտեմբերի 2024թ.

**«ԾԻԾԵՌՆԱԿ-23» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ**
**ՏՆՕՐԵՆ՝ Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ**
**(ք. Երևան, Էրեբունի, Սարի-Թաղ, տուն 81)**

**Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ**
**Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին**

Երևանի քաղաքապետարանի և «ԾԻԾԵՌՆԱԿ-23» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 15.01.2024 թվականին կնքված ԵՔ-ԳՀԱՇՁԲ-24/17 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված՝ Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնապահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը /ներառյալ օրացույցային գրաֆիկը/:

Պայամանգրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրի հ.2 հավելվածի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետ է համարվում շինարարական աշխատանքների և տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պայմանագիրը (ֆինանսական միջոցների տրամադրման համաձայնագրերը) ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 365-րդ օրացույցային օրը ներառյալ:

ՀՀ քաղաքացիական օրենսգչքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը Պայմանագրով սահմանված ժամկետում չի կատարել աշխատանքը՝ Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է Պայմանագրից, համարելով այն լուծված՝ 5.725.835 /հինգ միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար ութ հարյուր երեսունհինգ/ ՀՀ դրամ գումարի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրականացվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակվելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակվելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը եթե դատական քննություն արդյունքով որոշմանկատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում,Եթե՝

սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմնին.

Մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագիրը՝ կից վճարման պահանջների հետ միասին), սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից համապատասխանաբար 1.125.000 /մեկ միլիոն հարյուր քսանհինգ հազար/ ՀՀ դրամ որակավորման ապահովման և 750.000 /յոթ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ պայմանագրի կատարման ապահովման համար Երևանի քաղաքապետարանի 900015211429 հաշվեհամարին փոխանցելու նպատակով

06.12.2024

X

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** Signed by: OHANYAN MIKAYEL 4112850286 **Մ. ՕՀԱՆՅԱՆ**

Կատարող
Ֆինանսական բաժին
Հեռ..011-51-87-08